

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա ՊԱՊԻ

1978 թվականի օգոստոսի 26-ին Վատիկանում տեղի է ունենում Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Ա Պապի ընտրությունը: Պապ է ընտրվում Վենետիկի կարդինալ-Պատրիարք Լուչիանին:

Նորընտիր Պապը 66 տարեկան է և հայտնի է մանավանդ իր վարչական-հովվական, սուրբ գրական և մատենագրական գործունեությամբ:

Նոր Պապի գահակալության հանդիսությունը տեղի է ունեցել սեպտեմբերի 3-ին, կիրակի օրը, Հռոմի ս. Պետրոս Մայր տաճարի հրապարակում, բացօթյա, ի ներկայության եկեղեցական, պետական բարձրաստիճան ներկայացուցիչների և բազմահազար ժողովրդի:

Ժամը 6-ին 120 կարդինալներ ս. Պետրոս առաքյալի գերեզմանից նորընտիր Պապին թափորով առաջնորդում են հրապարակ, մասնավոր կերպով կառուցված Սեղան, որի վրայից նորընտիր Սրբազան Պապը բաշխում է իր անդրանիկ օրհնությունը բոլոր ներկաներին:

Ապա Նորին Սրբությունը բազմում է տաճարի գլխավոր մուտքի առաջ տեղադրված իր գահի վրա, և բոլոր կարդինալները ծունկի եկած հայտնում են իրենց հավատարմության և հնազանդության ուխտը: Այնուհետև Նորին Սրբությունը մատուցում է իր անդրանիկ հանդիսավոր պատարագը:

Այս հանդիսություններին, հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Ամենայն Հայոց Հայրապետի, մասնակցել է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Սրբազան Պապը շաբաթ օրը ընդունել և մասնավոր ունկնդրություն է շնորհել հայ եկեղեցու ներկայացուցիչ տ. Սերովբե արքեպիսկոպոսին, որը, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, շնորհավորել է նորընտիր Սրբազան Պապին և բարեմաղթություններ արել նրա ապագա գործունեության համար՝ ի փառս սուրբ եկեղեցու առաքելության, ի նպաստ եկեղեցիների ի Քրիստոս եղբայրական համագործակցության և աշխարհի խաղաղության: